ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ՇՀԾՁԲ-16-1-15/4 (ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/4) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի կարիքների համար՝ սոցիալական հոլովակների պատրաստման, հեռարձակման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 09.08.2016թ. N 1/60-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.08.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Սարգսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Բեքիրյանը, Ռ.Ազրոյանը, Ի.Չոբանյանը, Ա.Ղազանչյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Փի-Արտ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը որոշեց ՝ «Փի-Արտ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակցի կողմից հայտով ներկայացրած գնային առաջարկը արձանագրեց, որ «Փի-Արտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գինը գերազանցում է գնման հայտով հաստատված նախահաշվային գինը (Սոցիալական հոլովակների պատրաստման, հեռարձակման և տեղադրման ծառայությունների նախահաշվային գինը 22 500 000 ՀՀ դրամ է):
«Փի-Արտ» ՍՊԸ-ի հայտը մերժել և չհրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների, քանի որ «Փի-Արտ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը առանց շահույթի գերազանցում է գնման հայտով հաստատված նախահաշվային գինը:
-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-16-1-15/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգը ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ.Սարգսյան

Անդամներ՝ Ա.Բեքիրյան

Ռ.Ազրոյան

Ի.Չոբանյան

Ա.Ղազանչյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ՇՀԾՁԲ-16-1-15/4 (ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/4) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի կարիքների համար՝ սոցիալական հոլովակների պատրաստման, հեռարձակման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 09.08.2016թ. N 1/60-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 19.08.2016թ. ժամը 15-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Ռ.Ազրոյանը, Ի.Չոբանյանը, Ա.Ղազանչյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-16-1-15/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Սարգսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ՇՀԾՁԲ-16-1-15/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Փի-Արտ» ՍՊԸ-ն (Երևան, Ս. Վրացյան 71, բն. 7)
-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-16-1-15/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 19.08.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Փի-Արտ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտ:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

«Փի-Արտ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ծառայության անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	Նախահաշվային գինը ՀՀ դրամ
		«Փի-Արտ» ՍՊԸ		
1	Սոցիալական հոլովակների պատրաստման, հեռարձակման և տեղադրման ծառայություններ	22 000 000	4 400 000	22 500 000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

-Հաշվի առնելով, որ բացման նիստին չեն մասնակցում գնահատող հանձնաժողովի նախագահ Մ.Սարգսյանը և գնահատող հանձնաժողովի անդամ Ա.Բեքիրյանը, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և հայտի գնահատման նիստը հրավիրել 2016 թվականի օգոստոսի 23-ին ժամը-11.00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝

Ռ.Ազրոյան

Ի.Զոբանյան

Ա.Ղազանչյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան